ՆՈՐ-ԴԱՐ

№ 185 ՏԱՍՆԵԻՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 3 Նոյեմբերի 1894 Հինգշաբթի, 3 Նոյեմբերի ՏԱՍՆԵԻՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 185

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կոպէկ։ Ասւխանդր դրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ

ՈՎՍԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ԱՐՏԻՄ, ԳԷՈՐԳ, ԲԱՐՍԵՂ, ԳՐԻԳՈՐ և ՄԻՒՌԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՆԵՐԸ յաւօք սրտի յայտնելով առաջինը իւր որդու, իսկ միւսներն իրենց եղբօր՝

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

մահը, խնդրում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան տխուր հանդէսին, որ նշանակուած է հինգշաբթի, նոյեմբերի 3-ին։ Մարմինը դուրս կբերուի սեպհական տնից (Հաւլաբարի, սուրբ Կարապետի դարի վեր, № 11) առաւօտեան ժամը 10½-ին և կըտարուի սուրբ Մինաս եկեղեցին, այստեղից Խոջիվանքի գերեզմանատունը։

3—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ՏՓՐ-ՑԱԿՈՐԵԱՆ

Ընդունում է եթեւեկ, կիսագիշերօթիկ և գիշերօթիկ աշակերտներ. Սոլոլակ, Գանովսկայեա փողոց տուն № 11.

(658) 10—1.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Քրոնիկոն.—Բարձրագոյն շնորհակալութիւն. Վեհ. Կաթողիկոսի ներկայացուցչը Կայսրի Թագմանը. Կառավարչապետի երթը. Շուշու թեմ. գրպանոցը. Ալիմփերիտի դեղը. Տոմսերի վիճակահանութիւնը. Օրհնութեան կոնդակ. Գինու ակցիզ. Կովկասի Թէյ. Մհտապեայ գրիչների գործարան. Մխաիլոտի արդիւնաբերութիւնը.

Կ. Պոլսի հայ Թերթերից.

Պաշտօնական զեկուցում.

Ժողովուրդի ինքնակոչ բողոքարկուները.

Թղթակցութիւններ.—Նամակ Թիւրքիայից—Կ. Պոլիս.

Քաղաքական.—Օտար մամուլը ռուսական նոր ինքնակալի գահակալութեան առիթու. Օտարերկրեայ պատգամաւորութիւնները Ալիքսանդր III ի Թագմանը. Անգլիա. Չինաստան. Ֆորչա.

Խառն յօդուածը.

Հեռագրները.

Բանասիրական.—Չինաստան.

Տեղեկատու.

Յայտարարութիւններ.

ՔՐՈՆԻԿՈՆ

Կովկասի կառավարչապետը հեռագրով խնդրել էր գինուորական մինիստրին, որ նա արկանէ առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի բնակիչների և զօրքերի հաւատարիմ հպատակութեան զգացումները։ Նոյեմբերի 1-ին գինուորական մինիստրը հեռագրով պատասխանում է, որ Թագաւոր Կայսրը հաճել է հրամայել Իւր կողմից շնորհակալութիւն յայտնելու Կովկասի բնակիչներին և զօրքերին իրենց արտայայտած զգացումների համար։

—

Վեհափառ կաթողիկոսի կողմից երբև ներկայացուցիչ Պետերբուրգ ուղևորուեցաւ Նոյեմ. 2-ին, չորեքշաբթի, երեկոյեան ժամը 7-ին Թեմիս առաջնորդ գիր. Դէորգ եպիսկոպոս Սուրէնեանցը, ներկայ լինելու ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր Կայսրի յուղարկաւորութեան հանդիսին։

—

Չորեքշաբթի Նոյեմբերի 2-ին, Պետերբուրգ ուղևորուեցաւ Կովկասի կառավարչապետ գեն.-ադ. Ս. Ա. Շերեմետեւը Թագաւոր Կայսրի Թաղմանը ներկայ լինելու համար։

—

Արժ. Նահապետ վարդապետ Նահապետեանը, որ Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակով լիազօր իրաւունք է ստացել իւր գիտցածին համեմատ Շուշուայ Թեմական դպրանոցի համար ուսուցչական խումբ կազմելու և դպրանոցի գործերը կարգաւորելու՝ այժմս, Թիֆլիսումն է ուսուցիչները հրաւիրում։

Հրաւիրուած են ուսուցչութեան համար մեր յայտնի ուսուցիչներից՝ պ. Կանայեանը. Ինչպէս իմանում ենք, հայերին լեզուին քաջ հմուտ պ. Պուզեանն էլ հրաւիրուած է Շուշի ուսուցչութեան պաշտօնով։

—

Ալիմփերիտի դէմ գերմանացի բժիշկ Բերինգի գտած և ֆրանսիացի բժիշկ Ռուի կատարելագործած դեղը կամաց կամաց տարածւում է ամենուրէք։ Թիֆլիսն էլ անմասն չի մնում։ Մեր քաղաքում մինչև անգամ մտադրութիւն կայ յիշեալ դեղից պատրաստելու համար առանձին լաբորատորիա հիմնելու, որի համար Թոլլուտութիւն

Սա Չինաստանի ամենամեծ գետն է 5,000 քլմ. 4500՝ մղոն=4900 վերստ երկայնութ. և բերանի լայնութիւնն աւելի քան 30 քլմ.=25 վերստ. Եաու-Ձանկո-Ձու, որ անցնում է Հնդկաչինն և Թափւում է Բրահմապուդրայի մէջ։ Սիւ-Քեանկ կամ գետ Մարգարտեայ, որ Բիրմանի և Սիամի սահմաններից բղխելով հոսում է Կանտոն քաղաքի միջով՝ և Թափւում Չինական ծովը։ Եւ վերջապէս Ամուր գետը, որ բաժանելով ռուս-չինական արևելեան սահմանները, անցնում է Սիբիրի վրայով և Թափւում Օխոցի ծովը։

Կլիման Բուն Չինաստանում գեղեցիկ է, երկիրը պտղատու և արդիւնաբեր։ Միւս մասերում, կլիման բարձր լեռների պատճառով չոր և ցուրտ է, ինչպէս Սիբիրում, և երկիրն էլ աւազոտ ու ժայռոտ է։ Հողը լաւ մշակուած է, երկրագործութիւնը ծաղկած։ Գլխաւոր բերքերն են՝ արմտիք, բրինձ, Թէյ, շաքարի եղէգն, բամբակ, լեղակ, մետաքս, քեաֆիր, մուշկ, Թէյենի, բամբու անուանուած եղէգն, որից տեղացիք պանդան գեղեցիկ կարասներ են պատրաստում։

Կենդանիների մէջ կան՝ ձի, եզ, գոմէշ, ուղտ, մի տեսակ այծ, որի բալուկ մազերից տեղացիք չալ են պատրաստում։ Վայրենի կենդանիների մէջ բազմաթիւ են՝ վագր, ընձ, անգեղջեր, կապիկ և այլն։

Չինաստանը ունի հանքային մեծ հարստութիւն, ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, սնդիկ, Թանկագին քարեր և

ձախ ափակալ հոդ, որից շինում են ազնիւ չլաձապակեայ անօթներ։

—

Չինաստանում երեք գլխաւոր կրօն կայ։ 1) Կոնֆուկիոսի (500 տարի նախ քան Քրիստոս) վարդապետութիւնը քարոզում է՝ ընդունել հոգու անմահութիւնը, երկրպագել Տիանին (երկնքին) և զանազան երկրորդական չաստուածների, երկրպագութիւն տալ նաև նախնիքների ոգիներին։ Ի պատիւ Կոնֆուկիոսի հազարաւոր տաճարներ կան շինուած Պեկինում և շրջակայքում։ 2) Լաօտձիի կրօնը (առաջինին ժամանակակից) քարոզում է՝ չարչարել կրքերը, բայց և չզրկուել աշխարհային վայելչութիւններից։ 3) Բուդդայական կրօնը, որ կոչւում է Ֆոյ ազանդ և ընդունում է բազմաթիւ ոգիներ և չաստուածներ։ Վերջինիս միացած են շատ նախապաշարմունքներ և առասպելներ։ Սրան հետևողները կազմում են ժողովրդի մեծամասնութիւնը, գլխաւորապէս հասարակ դասակարգը։ Բուդդայական կրօնը ամենահին ժամանակներումն է սկիզբն առել Հնդկաստանում և ըստ ոմանց մի մասնաւոր ազանդ է Բրահմական կրօնի։ Բուդդայիզ հետևողները բրահմականների նման ընդունում են հոգու անմահութիւնը և նրա փոխադրութիւը մի կենդանուց միւս կենդանու մէջ, մի բոյսից միւս բոյսի մէջ, որպէս զի մաքրուին մեղքերից և լինին կատարեալ, ինչպէս որ ինքը Բուդդան կատարեալ էր։

ըին Վեհափառութիւնը բարեհաճել է այդ առթիւ մի օրհնութեան կոնդակ տալ։

—

Գինու վրայ ակցիզ դնելու խնդիրը մշակող առանձին յանձնաժողովն իւր պարապմունքները սկսելու է այս Նոյեմբեր ամսին։

—

Անդրկասպեան երկաթուղու «Զակավ» կայարանից հաղորդում են, որ այն կողմերում ձգուած Թէյի տնկարանների արդիւնաբերութիւնը, ըստ երևոյթին, ամուր հիմքեր է ստանում և այս տարի այդտեղ մշակուած բոլորովին պատրաստ Թէյը կ'արտահանուի դէպի Մոսկուա։ Դա Կովկասի հողում բուսած Թէյի առաջին արտահանութիւնը կլինի։

—

Մինչև այժմ ամբողջ Ռուսիայում մետաղեայ գրիչների մէկ մի գործարան չկար, այնպէս որ բոլոր այդ տեսակ գրիչները բերւում էին արտասահմանից։ Արդիւնաբերութեան այդ ճիւղի բացը ծածկելու համար, ներկայումս Պետերբուրգում առաջին ռուսական ընկերութիւնն է կազմւում, որ ձեռք պիտի զարնի մետաղեայ գրիչները պատրաստելուն։ Հիմնական դրամագլուխը 300,000 ր. է։

—

Պետական կալուածների մինիստրութիւնը մտադրութիւն ունի ամբողջ մի շարք միջոցներ ձեռք առնել՝ բարելաւելու համար ծխախոտի արդիւնաբերութիւնը հարաւային Ռուսիայում։ Ի միջի այլոց, ամեն մի միջոց գործ պէտք դրուի հարաւային նահանգներում ամեն տեղ մտցնելու ամերիկեան ծխախոտի բարձր տեսակների մշակութիւնը։

—

Բուդդայական կրօնի գլխաւոր կէտերը շատ տարբեր չեն քրիստոնէական վարդապետութիւնից։ Արգելւում է խռովութիւն, ստախօսութիւն, բարկութիւն, կեղծաւորութիւն, բամբասանք։ Քարոզում և պահանջւում է լինել՝ մարդասէր, հիւրասէր, ներել յանցաւորներին, պատուել ծնողներին, հոգալ Թէ օտար և Թէ բարեկամ աղքատների մասին, համբերել անբախտութեան ու ձախորդութեան ժամանակ, չափաւոր ու հեզ լինել առողջութեան ու վարքամոլութեան մի ջոցներին։

«Մենք ամենքս եղբայր ենք ու պարտաւոր ենք իրար սիրել և յարգել»։

«Ընկերոջդ հետ այնպէս վարուիր, ինչպէս կուզես, որ քեզ հետ վարուեն ուրիշները»։

«Բախտաւոր մարդ տեսնելիս փակիր աչքերդ, եղէմ մարդ տեսնելիս բաց արա»։

«Հօրդ ու մօրդ պատուէ, հոգն ընդանց՝ ծերութեան ժամանակ, նրանց պակասութիւններին այնպէս համբերէ, ինչպէս նրանք քո պակասութիւններից համբերել են մանկութեանդ միջոցին»։

Ահա չինական հաւատքի հանգանակը կամ Կոնֆուկիոսի վարդապետութիւնը։

Բուդդայական կրօնի մի քանի կանոնները նոյնպէս շատ նման են քրիստոնէական, կամ լաւ է ասել, գուտ կաթոլիկական եկեղեցու կանոններին,

Ա. ՊՈԼՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ

Հայոց ծովայ ջրի ի ընդհանուր ոտանաւորի մէջ

Ի ժամանակի մը, որ Ամերիկա դեռ չէր գտնուած, Եւրոպա մէջ ալ ոչ ոք կը կասկածէր, որ ծովուն մէջ ալ հայեր կան, եւ ոչ ոք կը մտածէր, որ հայերէն ալ ծովային բանաստեղծութիւն մը կրնայ ըլլալ։ Ամերիկա գտնուեցաւ, եւ ծովուն մէջ ալ հայեր գտնուեցան։ Ամերիկա գտնուեցաւ Քրիստոսէ յետոյ, եւ ծովուն մէջ հայեր գտնուեցան Քրիստոսէ յետոյ։ Ամերիկա գտնուեցաւ Քրիստոսէ յետոյ տասնհինգ դարերու ընթացքին մէջ, եւ ծովուն մէջ հայեր գտնուեցան Քրիստոսէ յետոյ տասնհինգ դարերու ընթացքին մէջ։ Ամերիկա գտնուեցաւ Քրիստոսէ յետոյ տասնհինգ դարերու ընթացքին մէջ, որովհետեւ Քրիստոսէ յետոյ տասնհինգ դարերու ընթացքին մէջ ծովուն մէջ հայեր գտնուեցան։

Ամերիկա գտնուեցաւ Քրիստոսէ յետոյ տասնհինգ դարերու ընթացքին մէջ, որովհետեւ Քրիստոսէ յետոյ տասնհինգ դարերու ընթացքին մէջ ծովուն մէջ հայեր գտնուեցան։ Ամերիկա գտնուեցաւ Քրիստոսէ յետոյ տասնհինգ դարերու ընթացքին մէջ, որովհետեւ Քրիստոսէ յետոյ տասնհինգ դարերու ընթացքին մէջ ծովուն մէջ հայեր գտնուեցան։ Ամերիկա գտնուեցաւ Քրիստոսէ յետոյ տասնհինգ դարերու ընթացքին մէջ, որովհետեւ Քրիստոսէ յետոյ տասնհինգ դարերու ընթացքին մէջ ծովուն մէջ հայեր գտնուեցան։

մի դէպք, որին Թիւրք կառավարութիւնը քաղաքական գոյն չտայ։ Նոյնը պատահեց և յիշեալ գուժ եկեղեցական հոգեհանգստի առթիւ։ Հանգուցեալը կայսրի համար հոգեհանգիստ կատարեցին ոչ միայն քրիստոնեաները, այլ և հրէաները։ Պատրիարք Ազարեանը շտապեց այդ հանդէսը մի օր առաջ կատարել Թէ ռուսներին և Թէ ֆրանսիացիներին հաճոյանալու համար։ Մեծ եպարքոսն այդ տեսնելով՝ հրամանագիր է ղրկում հայոց պատրիարքարան, որպէս զի սրանք ևս հոգեհանգիստ կատարեն։ Թէև մեծ եպարքոսը շատ լաւ գիտէր, Թէ որպէս հայերը, նոյնպէս և յոյները այդ հոգեհանգիստը անպատճառ պէտք կատարէին, և մի օր յետաձգելու գլխաւոր պատճառը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ կիրակի օրը աւելի հանդիսաւոր կատարել. այնուամենայնիւ հրամանագրում է, ցոյց տալու՝ Թէ հայերը իւր հրամանով միայն կատարեցին։ Իսկ Համայեակ սրբազանը գուշակելով այդ, շտապում է հոգեհանգստի կարգն աւելի վաղաւոր կատարել։ Այդպիսով եպարքոսի աշխատանքը իզուր է անցնում։

***

Պատրիարքական ընտրութիւնների կարգը տարբեր գոյն է ստանում։ Կառավարութիւնը ոչ մի կերպ չի համաձայնում Թոլլատրել ազգ. ժողովի գումարումը։ Նա սահմանադրութիւնը բացարձակապէս չընդունած է համարում։ Իսկ սրա վրայ առաջարկում է հայերին պատրիարքական ընտրութիւն կատարել յոյների ձևով։ Այսինքն մայրաքաղաքի մեծ ու փոքր Թաղերը պէտք ընտրեն երկու երկու պատգամաւորներ, մի եկեղեցական և մի աշխարհական և այս Թաղականներից ընտրուած պատգամաւորները ժողով գումարելով պէտք ընտրեն Կ. Պոլսոյ հայոց պատրիարքին, որին և ազգընտիր սիտդոսը պէտք տան...

Համայեակ սրբազանը հաւանութիւն չի տուել, նա պահանջում է սահմանադրութեան վերաբացումն ու օրինաւոր պատ. ընտրութիւն, որի համար էլ չարունակ դիմումներ է անում։ Ս. տեղապահն այնքան վստահ է՝ Թէ պէտք է յաջողի, որ Կայսեր հոգեհանգստեան առթիւ խօսած քարոզի մէջ ի միջի այլոց հաւաստեց ժողովրդին, Թէ չուտով Ազգային ժողով պէտք է գումարի և պատ. ընտրութիւն կատարի։

Ինչպէս տեսնում ենք այս հարցը դեռ չատ պէտք է ձգձգուի, սակայն եթէ տեղապահ սրբազանը հաստատ մնայ իւր որոշման վրայ, հաւատացած ենք՝ Թէ յաղթութիւնը իւր կողմը պէտք մնայ. բաւական է՝ որ տեղապահի շնորհքով խօսի ամբողջ Թրքահայ ժողովուրդը և կառավարութիւնը մերիօձաւոր բազմութեան օրինաւոր պահանջի առաջ չի կարող անտարբեր մնալ։

**

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ԻՆՔՆԱԿԱԼԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՒԹԻՒ.—Գերմանական ազդեցիկ Թերթերը շատ ոգևորութեամբ են վերաբերւում դէպի Նորին Մեծութիւնն Նիկոլայ II Կայսրի գահակալութիւնը։ Գերմանական մամուլը ռուսական ինքնակալ Բարձրագոյն հրովարդակի մէջ տեսնում է խաղաղութեան դարագլխի նոր արշալոյս և «Nat. Zeit.»-ը այսպէս է արտայայտում իւր կարծիքը.

«Արտաքսմանում, այսինքն այն տեղերում, ուր խաղաղութիւն է գըտնըւում և ուր ժողովրդի բարօրութիւնը տեսնւում է միայն խաղաղութեան մէջ, Նիկոլայ II-ի բարձրագոյն հրովարդակը մեծ տպաւորութիւն արեց. Ամենուրէք տրամադիր են՝ ռուսական երկրտասարդ ինքնակալի առաջին քայլը համարել երջանիկ ժամանակների նախադուռն»։

«König. Zeit.»-ը այդ միևնոյն առթիւ այսպէս է խօսում.

«Ռուս Կայսրի վսեմագոյն է իւր ժողովրդին երջանիկ տեսնել, ցանկանալով միանգամայն նրան փառք և զօրութիւն։ Անկասկածելի է բոլորովին, Թէ Նա մտադիր է Իւր հայրենիքի փառքն ու մեծութիւնը պաշտպանել, սակայն Բարձրագոյն հրովարդակի մէջ ոչ մի տեղ չկայ յիշուած, Թէ Նա ցանկանում է իւր երկրի սահմանները ընդարձակել։ Ընդհակառակը Նրա միակ ցանկութիւնն է պաշտպանել եւրոպական խաղաղութիւնը»։

«Berl. Tageb.» Թերթն ևս այս խօսքերով է արտայայտում իւր ըզգացումները Նիկոլայ II Նոր Կայսրի և գահ բարձրանալու առթիւ։

«Բարձրագոյն հրովարդակը ակներև կերպով աւելի ևս հաստատում է այն կարծիքը, որ նրա հրատարակութեւնց առաջ արդէն կազմուած էր Նիկոլայ II Կայսրի նկատմամբ, Թէ Նա կրում է մխիթարի՝ Իւր Մեղոյ խաղաղասիրական զգացումները»։

Իսկ ֆրանսիական «Temps» պաշտօնական Թերթը խօսելով Բարձրագոյն հրովարդակի և այն հեռագրի վրայ, որով Նորին՝ Մեծութիւն՝ ռուս Ինքնակալը յայտնած էր ֆրանսիական հանրապետութեան նախագահին Իւր վհատ ծնողի մահուան լուրը, ի միջի այլոց այս խօսքերն է ասում.

«Իւր խաղաղասիրական նպատակների վերաբերմամբ արած յայտարարութիւնը մասնաւոր համակրանքից շրջապատուած է արտայայտւում երիտասարդ Կայսրի շրջունքների վրայ... Նիկոլայ II Կայսրը ապացուցեց, որ իրեն ոչ միայն պատերազմական խորհուրդները չէ կրում իւր մէջ, հապա կարողանում է հակակշռել Իւր Ծնողի հետևած քաղաքականութիւնը՝ նրա բոլոր մանրամասնութեամբ... Նիկոլայ Կայսրը իւր՝ կազմիմը Պէրլինն ուղարկած հեռագրով մի անգամից ամրապնդեց այն կապը, որը միացնում է երկու բարեկամ ազգութիւններին միմեանց հետ... Ռուս ինքնակալի հեռագիրը պարզ ապացոյց էր արժանաւոր Զաւակի մարդասիրական բարձր ձգտումները ունենալուն...»

Ֆրանսիական նշանաւոր գրող Մելքիոր դը Վոգիւէ՝ «Figaro» Թերթի մէջ հրատարակած իւր երկայն յօդուածում խօսելով Ալէքսանդր III կայսրի գործունէութեան վրայ և վերջաբանի մէջ անցնելով նոր Ինքնակալի հետևելի քաղաքականութեան՝ ասում է.

«Իսկ ինչ է պատահելու վաղը, ինչ է սպասում մեզ ապագայում... ահա այն հարցերը, որոնք ներկայումս դուրս են Թռչում ամենքի բերանից։ Դրանց պատասխանը ստանալու համար հարկաւոր է սպասել... Սակայն բոլորովին հաւանական չէ Թւում, որ Նիկոլայ II Կայսրը ցանկանայ խզել երկու ազգերին միմեանց հետ կապող կապերը, որոնցով միացած են ու պատպանւում երկու ազգերի ակնյայտնի և ծանրակշիռ շահերը... Առ այժմ բացի ենթադրութիւններ անելուց հաստատ ոչինչ կարելի չէ ասել»։

—

ՕՏԱՐԵՐԿՐԱՑ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԼԷՔՍԱՆԴՐ III-Ի ԹԱՂՄԱՆ.—Պարիզից քաշուած հեռագրերը հաղորդում են, որ ֆրանսիական կառավարութեան և հասարակապետութեան նախագահ՝ Կազիմիր Պէրիէի կողմից որոշուած է ուղարկել մի պատգամաւորութիւն ռուսական Կայսրի Թաղման ներկայ գտնուելու համար, որի գլուխը պիտի գտնուի գեներալ Բուադէֆրը ժերվէ ծովակալի հետ։

Իսկ գերմանական կառավարութեան կողմից, Վիլհելմ Կայսրի որոշմամբ, Բետերբուրգ է ուղարկուում յուղարկաւորութեան տխուր հանդիսին ներկայ գտնուելու ծովակալ Հոյցը կապիտան Ֆեշլի և ուրիշ մի քանի բարձրադիր անձերի ուղեկցութեամբ։

—

ԱՆԳԼԻԱ. — Լոնդոնից եւրոպական Թերթերին հաղորդում են, որ այդ քաղաքի Հայդ-պարկ կոչուած մասում, մի մեծ տան առաջ ռումբ է պայԹել, որից խորտակուած են տան դռները և պատուհանները։ ՆՀԹադրւում է, որ դաւադրութեան այդ փորձը ուղղուած է եղել նոյն տան դէմուդէմը ապրող մի դատաւորի կեանքի դէմ։

—Նիւ-Իօրկից քաշուած մի հեռագիր հաղորդում է, որ Պէրուից ստացուած տեղեկութիւնների համաձայն, դէպի այդ տեղ են ճանապարհ ընկել անգլիական հինգ զրահաւորները բրիտանական կառավարութեան դէմ եղած մի ցոյցի պատճառով։ Պէրուի անգլիական հիւպատոսարանը յարձակում է կրած տեղացիներից և մինչև անգամ խօսւում է, Թէ հիւպատոսը գերուած է, կինն ու աղջիկը սպանուած, և տունը կրակի տրուած։

—

ՉԻՆԱՍՏԱՆ.—Տիեն-Ցինից «Times»-ին հեռագրում են, որ եւրոպական տէրութիւնների ներկայացուցիչները գումարուած են միատեղ և Կունգ իշխանը յայտնելով Չինաստանի այլ ևս անկարող լինելը Ճապոնական արշաւանքին դիմադրելու, խնդրել է պետութիւնների միջամտութիւնը հաշտութիւն կայացնելու վերաբերմամբ։ Կունգ իշխանը յայտնած է, Թէ Չինաստանը պատրաստ է հրաժարուելու Քորէայի վրայ ունեցած իւր իրաւունքներից և վճարելու պատերազմական բոլոր ծախքերը։ Եւրոպական կառավարութիւնների ներկայացուցիչները խոստացած են եղած առաջարկները պատրաստել երկոց կառավարութեանց առաջ։

—

ՔՈՐԷԱ.—Անգլիական մի Թերթի հաղորդում են, որ Քորէայի հարաւային երկու նահանգների մէջ տեղացիները սկսած են սաստիկ ընդդիմանալ վերաբերմամբ։ Կունգ իշխանը յայտնած է, Թէ Չինաստանը պատրաստ է հրաժարուելու Քորէայի վրայ ունեցած իւր իրաւունքներից և վճարելու պատերազմական բոլոր ծախքերը։ Եւրոպական կառավարութիւնների ներկայացուցիչները խոստացած են եղած առաջարկները պատրաստել երկոց կառավարութեանց առաջ։

—

ՅԱՊՈՆԻԱ.—Տոկիոյից հեռագրում են, որ Ճապոնական զօրքերը Փհեն-Յանգ քաղաքից 15 մղոն հեռու գտնուելով, Չինաստանի զօրքերի հրամանատարը՝ Եհ-Ճունգ-Թանգ, Ճապոնացիների մօտ է ուղարկել իւր ներկայացուցիչներին՝ հաշտութեան բանակցութիւններ սկսելու համար։ Ճապոնացիները պատասխանել են, որ նախ պէտք է Չինաստանի զօրքերը Փհեն-Յանգից հեռանան, և յետոյ միայն հաշտութեան բանակցութիւնները կարող են սկսուել։

—

ՀՆԴԿԱՍՏԱՆ.—Ամերիկեան նաւերը Պոմբայից հեռագրում են, որ Հնդկաստանի Ռաջպուտանա նահանգում սաստիկ սով է տիրում։ Ամենքը ուտում են ծառերի տերևներ, խոտ և ուրիշ այդպիսի բաներ։ Ամենքը հիւանդ են, և մեռնողների թիւը օրական 500 է։ Ամերիկեան նաւերը ցորեն են տարել այդ նահանգը։

—

ՊՐԱԶԻԼԻԱ.—Ռիո-Ժանէյրոյից հեռագրում են, որ Պրազիլիայի նախագահ Պեյշոտոն ընտրութիւնների ժամանակ ստիպուած է եղել նոյն տան դէմուդէմը ապրող մի դատաւորի կեանքի դէմ։

—Նիւ-Իօրկից քաշուած մի հեռագիր հաղորդում է, որ Պէրուից ստացուած տեղեկութիւնների համաձայն, դէպի այդ տեղ են ճանապարհ ընկել անգլիական հինգ զրահաւորները բրիտանական կառավարութեան դէմ եղած մի ցոյցի պատճառով։ Պէրուի անգլիական հիւպատոսարանը յարձակում է կրած տեղացիներից և մինչև անգամ խօսւում է, Թէ հիւպատոսը գերուած է, կինն ու աղջիկը սպանուած, և տունը կրակի տրուած։

—

ՉԻՆԱՍՏԱՆ.—Տիեն-Ցինից «Times»-ին հեռագրում են, որ եւրոպական տէրութիւնների ներկայացուցիչները գումարուած են միատեղ և Կունգ իշխանը յայտնելով Չինաստանի այլ ևս անկարող լինելը Ճապոնական արշաւանքին դիմադրելու, խնդրել է պետութիւնների միջամտութիւնը հաշտութիւն կայացնելու վերաբերմամբ։ Կունգ իշխանը յայտնած է, Թէ Չինաստանը պատրաստ է հրաժարուելու Քորէայի վրայ ունեցած իւր իրաւունքներից և վճարելու պատերազմական բոլոր ծախքերը։ Եւրոպական կառավարութիւնների ներկայացուցիչները խոստացած են եղած առաջարկները պատրաստել երկոց կառավարութեանց առաջ։

—

ՔՈՐԷԱ.—Անգլիական մի Թերթի հաղորդում են, որ Քորէայի հարաւային երկու նահանգների մէջ տեղացիները սկսած են սաստիկ ընդդիմանալ վերաբերմամբ։ Կունգ իշխանը յայտնած է, Թէ Չինաստանը պատրաստ է հրաժարուելու Քորէայի վրայ ունեցած իւր իրաւունքներից և վճարելու պատերազմական բոլոր ծախքերը։ Եւրոպական կառավարութիւնների ներկայացուցիչները խոստացած են եղած առաջարկները պատրաստել երկոց կառավարութեանց առաջ։

—

ՅԱՊՈՆԻԱ.—Տոկիոյից հեռագրում են, որ Ճապոնական զօրքերը Փհեն-Յանգ քաղաքից 15 մղոն հեռու գտնուելով, Չինաստանի զօրքերի հրամանատարը՝ Եհ-Ճունգ-Թանգ, Ճապոնացիների մօտ է ուղարկել իւր ներկայացուցիչներին՝ հաշտութեան բանակցութիւններ սկսելու համար։ Ճապոնացիները պատասխանել են, որ նախ պէտք է Չինաստանի զօրքերը Փհեն-Յանգից հեռանան, և յետոյ միայն հաշտութեան բանակցութիւնները կարող են սկսուել։

—

ՀՆԴԿԱՍՏԱՆ.—Ամերիկեան նաւերը Պոմբայից հեռագրում են, որ Հնդկաստանի Ռաջպուտանա նահանգում սաստիկ սով է տիրում։ Ամենքը ուտում են ծառերի տերևներ, խոտ և ուրիշ այդպիսի բաներ։ Ամենքը հիւանդ են, և մեռնողների թիւը օրական 500 է։ Ամերիկեան նաւերը ցորեն են տարել այդ նահանգը։

—

ՊՐԱԶԻԼԻԱ.—Ռիո-Ժանէյրոյից հեռագրում են, որ Պրազիլիայի նախագահ Պեյշոտոն

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նբ.—Պոլսի Թերթերից իմանում ենք, որ Ղալաթիոյ մէջ երիկի անուամբ մի կին է ապրում 103 տարեկան. դա իր տանային գործերն անձամբ է կատարում, գուլպայ է հիւսում և երբեմն մինչև Շիշլի ոտով գնում։

—Էյուբի կողմը մի Թաթար կին է ապրում 110 տարեկան, որ աղքատ լինելով լուացարարութիւն է անում և տնային իւր բոլոր աշխատութիւնները անձամբ է կատարում։

Պոլսի՝ Սուլթան-Բայազիտ Թաղում մի տան մէջ իբրև աղախին ծառայում է Սայիդ անունով մի կին, որ 127 տարեկան է։

Քարբերդի Շերօ գաւառակում Հիւսէյն անունով մի մարդ կայ 160 տարեկան, որը կատարելապէս առողջ է, տասներկու գաւակ ունի՝ վեց տղայ և վեց աղջիկ։

նալու ի նշան հպատակութեան և երկրորդ անգամ կայսրին ընծաները տանելու համար։ Այս չափս միայն պարտաւորական է դէպի չինական կայսրը, իսկ Քորէայում իւր Թագաւորը անկախ է։

Գ). Մոնղոլիան հիւսիսից սահմանակից է Ռուսիային, արևելքից՝ Մանջուրիային, հարաւից՝ Բուն-Չինաստանին, Մոնղոլիան իւր 2,000,000 ժողովրդով չինական կայսրութեան մէջ ամենաանհնազանդ երկիրներից է։ Անհնազանդ է, որովհետև բարձրաբերձ լեռներով շրջապատուած լինելով, ժողովուրդը աւելի վայրենական բնաւորութիւն ունի։ Բոլորը Թիւրքական-վրանաբնակները են։ Դրանք ցրուած են Գոբի կամ Շամ անապատում, ուր ամառը սաստիկ երազ է լինում, իսկ ձմեռը սաստիկ ցուրտ։ Մոնղոլական ցեղն ունի իւր իշխանները, որոնցով կառավարւում է։ Սրանք ժողովրդի կողմից կայսրին հարկ են տալիս, ոչ զրամական այլ ուղտ, եզն, ձի և այծ։ Կայսրն էլ, որպէսզի հաւատարիմ մնան, զանազան պարգևներ է տալիս դրանց ու Ճանապարհ Ձգում։

Մոնղոլիայի գլխաւոր քաղաքներն են. Ուրկա կամ Քուրէն, որտեղ բնակւում է նոյն ցեղի մեծ քրմապետը, իսկ Մայմաչինն և Քուլջա, վաճառաշուկա քաղաքներն են։ Մոնղոլիայի արևելեան մասը կոչւում է չինական Թաթարքուստան, կամ Ալթի-Շեհիր, որի բնակիչները մահմեդական են։ Դա մի ժամանակ ձևացնում էր անկախ խանութիւն։ Գլխաւոր քաղաքներն են՝ Սաբլխանդ և Քաշգար։

Դ.) Իլի և Թիւրքեթը սահմանակից երկրներ են։ Իլին Մոնղոլիայի պէս հպատակւում է Չինաստանին, Թիւրքեթի սահմաններն են՝ հարաւից արևելեան հնդկաստան, հիւսիսից՝ Իլին և արևելքից Բուն-Չին. Աւելի բարձր է Մոնղոլիայից իւր բնական դիրքով։ Ծովից հեռու է, նոյնպէս քարքարուտ և երաշտ երկիր։

Թիւրեթ 6 միլիոն բնակիչ ունի, սակայն չունի մի նշանաւոր քաղաք, բոլորն աւաններ, մեհեաններ ու վանքեր են։ Ինչպէս իւր տեղում լիչեցինք, այստեղ է Դալայ Լամա չին-բուդդայական մեծ քրմապետի պալատը կամ աթոռը։

Այժմ ընդհանրապէս խօսելով չինական անցեալ մի քանի նշանաւոր գործերի մասին, կանգ կառնենք սըրա կառավարչական կազմակերպութեան վրայ։

Չինացիք մի այնպիսի ազգ են, որ եթէ մէկին իրենցից մի պահանջ չունենայ, իրենք ոչ մէկից մի բան չեն պահանջիլ։ Խաղաղասէր ու իւր ունեցածով բաւականացող ժողովուրդ է։ Այսպիսով, սկզբից միշտ ուրիշներն են եղել Չինաստանի վրայ յարձակողը։

Դեռ 3-րդ դարում էր, որ Թաւթառական ու վայրենի ազգերը հանգիստ չէին տալիս խաղաղասէր Չինացուն, Անցեալ դարու վերջերին, Ճանապարհորդ մի անգլիացի իւր ուղեգրութեան մէջ հետևեալն է ասում. «Չինացին հին ժամանակից լուսաւորուած ազգ էր. ժողովուրդը միշտ աշխատութեան մէջ լինելով, տէրութիւնը ազատ զինուորներ էր պահում, որպէս զի աշխատաւորը մարդիկ պատերազմի ժամանակ ստիպուած չլինէին գործերը Թողնելով հայրենիքի պաշտպանութեանը գնալու։ Դրա համար և պատերազմների ժամանակ էլ արհեստները ծաղկում ու բարգաւաճում էին... Մոնղոլները վրանաբնակ լինելով, երկրագործութիւն չըգիտէին, սովը շուտով տիրից նրանց։ Քաջ, բայց քաղցածութիւնից նուաղած մոնղոլները յուսահատուած անհամար բազմութեամբ Եւրոպայի վրայ յարձակուեցան, ու Ֆրանսիայի և հիւսիսից՝ Ցունաստանի մէջ սիռուելով մինչև Իտալիա հասան։ Բայց Հռոմէացւոց Այետիոս զորավարը Շալոն գետի ափին երեք օր չարունակ այնպիսի ջարդ տուեց վայրենի հրոսակներին, որ նրանք ստիպուեցան յետ քաշուել ու դարերով չհամարձակուեցան այլևս դէպի արևմուտք դիմելու։ Մոնղոլները երբ այդ կողմից յաջողութիւն չունեցան, դիմեցին Բուն-Չինաստան, բայց Չինաստանից էլ նոյնը ստացան։ Չինացիք միւս անգամ այդպիսի անակնկալ յարձակումներից ապատ մընալու համար չինեցին մեծ պարիսպը անթիւ աշտարակներով ու դարաններով»։

13-րդ դարում մոնղոլ-Թաթարների առաջնորդ՝ քաջ ու պատերազմասէր Չին-Ղիզ-Խանը իւր խուժանով անցաւ մեծ պարիսպը և նուաճեց յայնծաւալ պետութիւնը։

17-րդ դարում, ինչպէս վերևում մասնաւորապէս յիշեցինք, մանջուր Թաթարները գրաւեցին չինական կայսերական գահը։

Իսկ ներկայ դարում Չինաստանը տեսել է երեք պատերազմ։

1842-ին Անգլիայի հետ, վաճառականական հարցերի, գլխաւորապէս աֆիոնի առևտուրի պատճառով։

1860-ին Ֆրանսիան խանգարից Չինաստանի խաղաղութիւնը նոյն տեսակ պատճառներով։ Այս տարի ևս իւր դրացի Ճապոնիան է սկսել հարուածել անբախտ Չինաստանին՝ արդէն մեզ ծանօթ խնդիրների համար։ Եւ ով գիտէ դեռ ինչեր ունի տեսնելու Բուդդայի երկնային կայսրութիւնը։

—

Չինաստանը ըստ չինացւոց կոչւում է Թիեն-Ցին, այսինքն երկնային կայսրութիւն։ Կառավարութիւնը միապետական է։ Կայսրը, ըստ չինաց, կոչւում է Թիեն-Ցի, այսինքն երկնից որդի։ Մինիստրները, կառավարչապետները և բոլոր պետական ծառայողները կոչւում են մանդարիններ։ Ժողովուրդը, որ այժմս 450 միլիոն է համարւում, պարապում է երկրագործութեամբ, վաճառականութեամբ, և արհեստներով։ Մանդարինը Ճանաչ-

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱԾԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 նոյեմբերի. — Կայսր Ալէքսանդր III-ի թաղման օրուայ համար մայրաքաղաքի փողոցները խորին սուգի պատկեր են ստացել, մանաւանդ Նեւսկի պրոսպէկտը և յուղարկաւորութեան ամբողջ ճանապարհը. տների վրայ սպիտակ և սև կրեպներ են քաշուած, Նեւսկի պրոսպէկտի լապտերների բոլոր սիւներին սև ժապաւէններ են փաթաթուած, կանգնեցրած են սգոյ բուրգեր և սիւներ։ Նորին Մեծութեան կաբինետի շինութիւնը բոլորովին ծածկուած է սևով. օտարերկրացի դեսպանատների դրօշակներն իջեցուած են։ Այսօր՝ վաղ առաւօտուանից Պետերբուրգի փողոցներում անսովոր շարժողութիւն կար, ամենքն շտապում էին տեղեր բռնել տների լուսամուտներում, կամ ուղափերի վրայ։ Փողոցների լապտերները լուսաւորում էին սև գործուածքի մէջից. փողոցներում աւազ և կանաչ է փռուած։ Ժամը 10-ին հանդէսը շարժուեց Նիկոլայևսկայա կայարանից և երկարեց 4 վերստ տարածութեամբ։ Հանդէսին մասնակցում էին գվարդիայի բոլոր մասերը, բոլոր հաստատութիւնների ներկայացուցիչները, բարձրաստիճան անձերը, մինիստրները։ Երկրորդ ժամին հոգեհանգիստ կատարուեց Պետրոպաւլովսկի տաճարում, որից յետոյ Թագաւոր Կայսրը գնաց Անիչկով պալատը։ Պալատի շուրջն ահագին ամբոխ էր կանգնած։

Հոկտեմբերի 31-ին Կրեմլի Մեծ պալատի ներքին օթեակներից Արխանգելսկի տաճարը գնալիս Թագաւոր Կայսրը Գէորգեան դահլիճում, դիմելով Մոսկուայի ազնուականութեան, վաճառականութեան և պետական հաստատութեանց ներկայացուցիչներին ասաց. Ծանր է այժմ լինել Մոսկուայում, որին այնքան անկեղծ կերպով սիրում էր Իմ Անմոռանալի Հայրը, բայց Կայսրուհին և Ես սրտի մխիթարութիւն ենք գտնում ազօթքների և այն արտասուքների մէջ, որ ամբողջ Ռուսիան թափում է փորձութեան այս օրերին։ Թող Աստուած օգնի Ինձ, որ Ես մի ջերմ սիրած Հայրենիքին ծառայեմ միևնոյն կերպով, ինչպէս ծառայել է նրան Իմ Հանգուցեալ Հայրը, և այսուհետև տեսնեմ նրան Հօրս ցոյց տուած պայծառ և ճաճանչափայլ ճանապարհի վրայ։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Երկաթ ուղու գնացքներ

Թիֆլիսից Բաքուում գնում է

Մարդատար գնացքը առաւօտեան 9 ժամ 30 րոպէին, իսկ Բաթումում հասնում է երեկոյեան 9 ժամ 45 րոպէին։ Պոստային գնացքն երեկոյեան 6 ժամ 50 րոպէին։ Բաթում հասնում է 8 ժ. 15 րոպէին։

Բաքուից Թիֆլիս գալիս է

Մարդատար գնացքն առաւօտեան 9 ժ. 40 րոպէին։ Թիֆլիս հասնում է երեկոյեան 9 ժ. 55 րոպէին։ Պոստային գնացքը գիշերը 11 ժ. 20 րոպէին, Թիֆլիս հասնում է կէսգիշերը 12 ժամ 25 րոպէին։

Թիֆլիսից Բաքու գնում է

Պոստային գնացքը կէսգիշերը 1 ժամ 10 րոպէին, Բաքու հասնում է առաւօտեան 7 ժամ. 30 ր.։

Բաքուից Թիֆլիս գալիս է

Պոստային գնացքը գիշերը 11 ժ. 5 րոպէին. Թիֆլիս գալիս է երեկոյեան 5 ժ. 50 րոպէին։

Թիֆլիսից Կանծակ գնում է

Ապրանքակիր-մարդատար գնացքը երեկոյեան 7 ժամ. 27 րոպէին,. ճանձակ հասնում է առաւօտեան 7 ժ 4 ր.

Կանծակից Թիֆլիս գալիս է

Ապրանքակիր-մարդատար գնացքն երեկոյեան 6 ժամին, Թիֆլիս գալիս է առաւօտեան 7 ժամ 35 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ՌՈՅԱԼՅՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԻՑՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՋԱՅՆԱԽԱՉԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՅԼՆ ԵՒ ԱՅԼՆ

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԻՑՈՎԱՆՑՆԵՐ

ո-ղարիւսմ է չէ։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆԵՐԻ ԵՒ ՋԱՅՆԱԽԱՉԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԻԴՐՈՆԱԿԱՆ

Դ Ե Պ Օ

Ք. Մ. ՄԻՐԻՄԱՆՅԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Тифлисъ. Музыкальное депо Б. М. Миримяниа. Дворцовая ул.

(552) 30—24

ՉԵՂԱԾ ՆՈՐՈՒԹԻՒՆ

ԷԼԷԿՏՐՈԼԱՏ

Անհրաժեշտ է ամեն տեսակ լամպի համար։

Կրկնապատկում է լոյսը, պահպանում է պայթումից և աշխատում է հետն ու ծուխը։ Գինը 30 և 50 կ.։ Օտարաքաղաքացիները պէտք պատուէր տան 3 րուբլու. Ճանապարհած. 40կ.։ իսկ Ասիական Ռուսիայում նայելով հեռաւորութեանը.

ՀԵՌԳԱՐՏ.

Спб., Пассажъ, 37.

(403) 15—15

Год XIII 1895 Год XIII

ВЪ ГОРОДѢ КАРСѢ
КАРСКОЙ ОБЛАСТИ
ОТКРЫТА ПОДПИСКА
НА ГАЗЕТУ
„КАРСЪ"
на бутущій 1895 годъ

Газета „Карсъ" въ 1895 году будетъ издаваться на тѣхъ-же основаніяхъ, какъ и въ текущемъ 1894 году, по той-же программѣ и подъ тою-же редакціею.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:
съ доставкою и пересылкою ТРИ рубля въ годъ

Подписка принимается въ редакціи газеты „Карсъ", въ гор. Карсѣ, куда адресуютъ свои требованія и иногородные.

Газета „Карсъ" имѣетъ ближайшею цѣлью всестороннее изученіе Карсской Области и распространеніе въ обществѣ вѣрныхъ и точныхъ свѣдѣній, какъ о нынѣшнемъ ея состояніи, такъ и о мѣропріятіяхъ, направленныхъ къ ея благоустройству.

(Ф.) 3—3

ՀՆԵՐԻ ԴՐՈՒՄՄՈՆԴ

ԱՄԵՆԱԼԱՒ ԲԱՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ
Անգլիերէնի գերմաներէն թարգմանութիւնից
վերադրեց
Կարապետ սարկաւագ

ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆՑ

Թիֆլիս, 1893.

Գինն է 20 կոպէկ

Դիմել կեդրոնական գրաւաճառանոցին, Թիֆլիս։

№—18

Լ. ՎԱԳԵՆՀԷՅՄԻ

ԱՏԱՄԻ ՓՈՇԻ ԵՒ ԱՏԱՄԻ ԷԼԷՔՍԻՐ

մաքրում է ատամները և զովացնում է բերանի խորշը, նոյնպէս գործածւում փտած ատամների համար։ Էլէքսիրի գինը 1 ր.—1 ր. 50 կ.։ Ատամ և փոշին 1ր.։ Ճանապարհածախքը 50 կ.։ Հասցէն՝ Спб. Невскій пр. № 21.

(404) 20—18.

№4711.

ԳԼԻՑԵՐԻՆԻ ՍԱՊՈՆՆԵՐ

Մեծ հռչակ են ստացել իրենց պատուական յատկութիւնների շնորհիւ. խիստ գերազանցում են իրենց գլեցերինի պարունակութեամբ, առատ փրփուրով և նուրբ անուշահոտութեամբ։

ԱՒԹՈՐԻՒՄ ՆՇԱՆԱԿՈՒՄ

№ 4711 Վարդագոյն թափանցիկ սապոն.
№ 4711 Շուշանի թափանցիկ սապոն.
№ 4711 Յափրուկի թափանցիկ սապոն.
№ 4711 Օգը կոլոն թափանցիկ սապոն.
№ 4711 Բենզոյի թափանցիկ սապոն.
№ 4711 Մոնոպոլ գլիցերինի սապոն.

№ 4711 Ֆիրմայի արդիւնքները կարելի է ստանալ Ռուսիայի պարֆիւմերային և պեղատնային բոլոր առևտրական մագազիններում և արտասահմանում։

Գնելիս խնդրում ենք ուշք դարձնել գործարանի կառ. հաս. №4711 յարկի վրայ։

ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԱՂԱՔՆԵՐՑ!

(М.) 4—4.

Ուսուցիչ ԳԷՈՐԳ ԴԻՒԱՆԵԱՆՑԸ զաւակներով կէկել Բէբինեան, Եղիսաբէթ Բագինեան և եղբարք Սուլիաններ խորին ցաւով յայտնելով՝ առաջինը իւր ամուսնու և միւսները իրենց քրոջ

ԿԱՏԱՐԻՆԷ ԴԻՒԱՆԵԱՆԻ

մահը՝ խնդրում են ազգականներին և բարեկամներին հինգշաբթի, նոյեմ. 3-ին, շնորհ բերել յուղարկաւորութեան Հանգուցեալի մարմինը առաւօտեան 10 ժամին, սեպհական տնից, (Խալշաեա-Կրիվաեա փողոց №23) կրտանուի կաթուղիկէ. ս. Գէորգ եկեղեցին, իսկ այդ տեղից Խոջիվանքի գերեզմանատուն։ Հոգեհանգիստը կըկատարուի չորեքշաբթի երեկոյեան ժամի 6-ին.

2—2

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Ա. ԿՈՊՊ

Մ. Խոջայենցեան փող., 132



Մեծ քանակութեամբ ՆՈՐ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ 350-ից մինչև 450 րուբլի։

(314) 25—7.

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Ei

ՆԱՒԱԳՆՈՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԿՍՐՈՒԹԵԱՆ

Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղիղ և երթևեկութիւն ՄԱՐՍԷՑԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷԼ երկու շաբաթը մի անգամ.

Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները.

Բաթումից Պարիզ հաղորդակցութեան տոմսակները սովորական գնով։
Բաթումից մեկնում է

Յոգեքշաբթի 2 (14) նոյեմբերի չորեքնաւ «Մինգռելի», կապիտան Փիքուէն, և այդպէս երկու շաբաթը մի անգամ չորեք. օրերը, ժամը 4 են կէսօրուայ։ Տեղեկութիւնները ստանալու համար թոյլ բարեհաճեն դիմել հետեւեալ գործակալներին։

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՑԻՆ, Նաւթերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐՍԿՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարվանսարայ Գէորգ Բաղալէ։
Բաքուում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Հոլիւբեակինսկայա հրապարակ։
Նովոռոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՑԻՆ։

(316) 20—14

Вышелъ и разсылаются подписчикамъ 90 выпускъ

(Райскія смоквы—Реформатская церковь)

„Настольнаго Энциклопедическаго Славаря",

изданіе съ 44 вып. Т-ва А. Гранатъ и К°, бывш. Т-ва А. Габель и К°,

Изданіе обнимаетъ всѣ отрасли знанія и стремится содѣйствовать самообразованію и болѣе разносторонному развитію. Въ изданіи принимаютъ участіе: проф. Д. Н. Анучинъ, проф. П. Г. Виноградовъ, проф. Ю. С. Гамбаровъ, М. Я. Герценштейнъ, пр.-доц. Г. М. Герценштейнъ, В. А. Гольцевъ, В. Н. Григорьевъ. пр.-доц. И. Я. Гурляндъ, пр.-доп. А. Г. Гусаковъ, Діонео, маг. А. И. Каминка, маг. А. К. Кедровъ, проф. В. Ф. Левитскій, пр.-доц. И. Л. Лось, проф. И. В. Лучицкій, проф. И. Н. Миклашевскій, С. А. Муромцевъ, В. А. Мякотинъ, проф. П. А. Некрасовъ, проф. В. М. Нечаевъ, В. П. Острогорскій, М. Л. Песковскій, проф. Э. Ю. Петри, проф. Э. Л. Радловъ, М. Н. Ремезовъ, пр.-доц. А. Р. Свирщевскій, А. Н. Субботинъ, проф. А. С. Таубергъ, проф. А. Ф, Фортунатовъ, проф. А. И. Чупровъ и др.

Въ вышедшихъ 90 выпускахъ (составляющихъ 6 томовъ и 6 вып. 7-го тома) помѣщено 64,262 статьи и замѣтки, 1,259 портретовъ и рисунковъ, 18 географическихъ картъ, хромо-и олеографіи, таблицы рисунковъ, 2 серіи „Снимковъ съ картинъ классическихъ художниковъ".

Все изданіе составитъ 108—115 выпусковъ или 8 томовъ. Цѣна тому (14 вып.) на обыкнов. бум. 4 р. 20 к., на лучш. бум. 5 р. 60 к., тому въ перепл. 4 р. 50 к. и 6 р. За пересылку приплачивается 10% цѣны. *По окончаніи изданія цѣна будетъ повышена.* Допускается разсрочка на слѣд. условіяхъ: при подпискѣ вносится 5 руб., послѣ чего высылаются первые 6 том. съ наложеннымъ платежомъ въ 5 р., остальныя деньги выплачиваются трехмѣсячными взносами по 5 руб.

Подробные проспекты съ отзывами печати выдержками изъ текста высылаются по требованію безплатно.

Главная контора: Москва, Долгоруковскій, 8. Отдѣленія конторы: Одесса, Малый пе. д. Гессена; Саратовъ, Мало-Сергіевская ул., д. Губерн. Земской Управы: Томскъ, при Агентствѣ „Западная Сибирь"; Самара, при редакціи , Самарской Газеты"; Таганрогъ. при редакціи „Таганрогскаго Вѣстника".

3—2

ՓԻՆՈՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԳԵՐՄԱՆ ՇՏԱՅՆԻ Ե ԸՆԿ. ՎԱՐՇԱՒՈՒՄ

Ընդունում է կոմիսիայով ամեն տեսակ գինիներ և պարապում է այդպիսի գինիների վաճառումով։ Ունի առաջնակարգ ռեֆֆերենցիաներ։
Виноторговля Германа Штейнъ и К° въ Варшавѣ, Гусья улица, №11

(М.) 3—3

Дозволено цензурою. Тифлисъ 2-го Ноября 1894 Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова Гол. пр. домъ Читахова.